

ԹԵՄԱ 25

Դասընթացի անվանումը՝	«Պատիժ նշանակելը հանցանքների և դատավճիռների համակցությամբ և ռեցիդիվի դեպքում»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քրեական դատարանի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար: Դասընթացը կարող է օգտակար լինել նաև վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների համար:

Դասընթացն անդրադառնում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին հանցանքների և դատավճիռների համակցությամբ և ռեցիդիվի դեպքում: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու սկզբունքները:
- Դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սկզբունքները:
- Պատիժ նշանակելը ռեցիդիվի համար:

Դասընթացը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Հովհաննես Ղուկասյանը: